# Բլից հարցեր նախադպրոցական տարիքի երեխաների համար



Փոքրիկ.am կայքը ներկայացնում է բլից հարցերի շարք, որոնց օգնությամբ կարելի է կոփել նախադպրոցական տարիքի երեխաների միտքը, ստուգել նրանց գիտելիքներն ու տրամաբանությունը։

## Ի՞նչ կդառնա

Հեծյալն առանց ձիու հետիոտն

Ծառն առանց ճյուղերի գերան

Ինքնաթիռն առանց թևերի ավտոբուս

Գիրքն առանց էջերի կազմ

Այգին առանց ծառերի բացատ

Մատիտն առանց միջուկի փայտիկ

Բազմոցն առանց թիկնակի նստարան

Բարձն առանց բմբուլների պարկ

Սեղանն առանց ոտքերի տախտակ

Լուցկին առանց ծծմբային գլխիկների փայտիկ

## Ընտրիր համապատասխան զույգը

Սլաքներ – ժամացույց, անիվ – ? ավտոմեքենա

Հրաբուխ – ժայթքել, գետ – ? հոսել

Թռչուն – թևեր, ձուկ – ? լողակ

Կարմիր – կանգնել, կանաչ – ? շարժվել

Աշուն – անձրև, ձմեռ – ? ձյուն

Սեղան – սփռոց, հատակ – ? գորգ

Ուսուցիչ – դպրոց, բժիշկ – ? հիվանդանոց

Մարդ – ձեռքեր, կատու – ? թաթեր

Գնացք – կայարան, ինքնաթիռ – ? օդանավակայան

Գրող – գիրք, քանդակագործ – ? արձան